

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՔ ԵՆԻՑՆԻՑԻ ՎԱՐՈՂ ԵՔ ՁՅԲ ԵՐԿՐՈՒՄԸ ԱՐԿԵՍԱԸ ԼՅՅԱՅԱՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ
ԼՈՒՄԻՆԱՏԻՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԵՐ:

ՔՐՈՅՈՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆԵՐԸ ՎԱՐՈՂ ԵՔ
ԻՄՈՒԱԿ "ՇԱՄԱԼՅԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ՎՈՅՔԻՑ

www.freebooks.am


ԵՆԴՐՈՒՄԱԿ ԵՎՐ, ՈՐ ԾԳՏՎՈՒՄ ԵՔ ՄՏԵՐ ՎՈՅՔԻՑ:
ՑԱՆԿՈՒՄԻ ԵՎՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ freebooks@rambler.ru



www.freebooks.do.am
www.freebooks.am



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՆՐԵՎԱՆ «ՆԱԻՐԻ» 1998

ԳՄԴ 84.5 (Ճապ)
Ճ 317

Ռուսերենից թարգմանեց և կազմեց
ԱՅԳԻՆ ՄՈՐԻԿՅԱՆԸ

Ճապոնական պոեզիա

Ճ 317 Բանաստեղծ (Թարգմ և կազմ Այդիմ
Մորիկյանը — Եր Նաիրի, 1993 136 էջ

Ոստ ժամանակ չի անցել այն օրերից երբ մենք
տախտ ունեզանք առաչին անգամ շփվելու ճապոնա
կան պոեզիայի, հատկապես նրա դասական դրսևո
րումների՝ հոքումների ու թանկանների հետ որոնք
միանկամայլ նոր մի աշխարհի դրսևեր բացեցին մեր
առչև, հաղորդակից դարձրին նրանց գերխիտ ու
միածամանակ մարք գեղեցկությունը, պատկերաչին
տար համակարգին և սուսանկի շատ բամ ովեցին
մեզ:

Ելլ յ ի ի պոեզիայից կա շարված բարեխիղճ ամեն
մի նոր թարգմանություն այդ իմաստով ողջունելի է
և ավելի է հարստացնում մեզ

Ճ 4701000000 (15) 93
705 (01) 93

ԳՄԴ 84.5 (Ճապ)

ISBN 5—550—00829—7

© «Նաիրի»
հրատարակչություն 1993

VII—XVIII ԴԱՐԵՐ

ՕՏՈՄՈՒ ՏԱԲԻՏՈՒ

* * *

Վասն ունայնության
Խոհն անիմաստ է
Ավելի լավ է, թեկուզ ոչ ընտիր,
Գի՛նու գավաթը
Պարպել առանց խոհ

* * *

Երջանկությունը
Մեզ բաժին լինի թող երկրի վրա
Այլ աշխարհներում
Թոչուն կդառնանք, թե՛ մժեղ շնչին,
Մե՛կ է հավատա՛

* * *

Խփել է ժամը
Իմ վերադարձի
Բայց տանը, ասեք,
Ո՞ւմ անուշաբույր բազուկի վրա
Գլուխս հանգչի

ՕՏՈՄՈՆ ՅԱԿԱՄՈՏԻ

Ստի մեջ անգամ
Ճամարտության գեթ սի կաթիլ կա
Եվ, գուցե, իրոք, չնայած նրան,
Որ չես սիրում ինձ
Մի քիչ սիրո՞ւմ ես

ԵՐԳ, ՈՐ ՀՈՐԻՆԵՑԻ ՍԱԿԷ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ

Այս կյանքը, որի սլացքը դեպի վերջալույս
կանխել ես տենչում,
Եվ, որ բըմերը սրբագործում են լույս
արդթքներով,
Զդուս ձեռքերը առ Տեր կ սրկառած
Փրկում եմ միայն, միայն
Քեզ համար

ԿԱՍԱ ԿԱՆԱՄՈՒՐԱ

Թե արեգակի լուսե երկունքը միշտ մեզ հետ
լինի,
Ուրեմն կյանքի մուտ կտոճաններում մենք
կհանդիպենք
Եվ դու ինձ համար
Մի թախծիր այդքան և մի տանջիր քեզ
Միայն ողջ մնանք

Օ, եթե իրոք աստվածներ չկան
Ոչ լուրթ երկնքում, ոչ երկրի վրա,
Օ, միայն այդժամ
Երկու զուգահեռ չեն հատվի երբեք,
Եւ հող կդառնամ քեզ չհանդիպած

Հոգու սիրուհուց,
Որի անհատակ կարտոը հիմա սիրտս է մաշում,
Անջատված եմ ես
Գետեր, ժայռեր են այժմ մեզ զատում,
Եվ հոգիս երբեք անդորր չի գտնի

* * *

Մտածում էի լոկ նրա մասին,
Եվ հանկարծ նիրհը հեզորեն ձուլեց թարթիչներս
իրար,
Եվ տեսա նրան
Օ ճակատագիր թե իմանայի որ երազ է այս,
Կարթնանայի՞ միթե

Տխուր է կյանքը Թախիձն անհատակ
Բաժինն է բոլոր մահկանացուների Այլ պարզե
չկա

,

Իսկ ի՞նչ կմնա
Մշուշ կապուտակ—
Իր իսկ մոխիրով հանգած կրակից

ՄԻՔՈՒ ՏԱԳԱՄԻՆԷ

* * *

Ջովն աշնանային
Մեղմորեն հպվեց լուսձ քնարին
Թույլ մի արձագանք
Բայց արդեն հույզերն անցած սերերի
Մրրիկ են տենչում

ՍՈՆԷ ՅՈՍԻՏԱԿԱ

ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

* * *

Այն օրից հետո,
Երբ որ ինձ լքեց սրտիս տիրուհին,
Զգացի որքան պառ է գիշերը,
Աշունը ոսկե
Որքան թախճալի

ՍՅՈՎՈՒ ՍՅՈՆԻՆ

ՆԱՅԵԼՈՎ ԿԱՅԾԱԿՆԱՀԱՐ ԵՂԱԾ ՀԱՋԱՐԱՄՅԱ ԿԱՂՆՈՒՆ

Ծխայով հանդարտ
Մեզ հրաժեշտ է տալիս այս հսկան
Օ, ցնորքում այս որ կյանք ենք կոչում,
Ո՞ր անհայտ պահին կայծակը, ասեք,
Կգտնի և ինձ

ՍԱԳԱՄԻ

Կյանքս հենց հիմա
Կարող եմ ինչ-որ մեկի հետ փոխել
Միայն թե դարձյալ
Անհույս ու տրտում չսպասեմ դարձիդ,
Ոնց անցյալ գիշեր

ԻՋԻՄԻ ՍԻԿԻՔՈՒ

Այնքան հաճախ եմ ես համեմատել
Հանդերձիդ բույրը

Ծաղկած սալորեանու ճյուղի հոտի հետ
Որ կարող եմ հիմա ճիշտ կանխատեսել
Նրա ծաղկումը

ԱՆՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԵՐ

Միրոս թախծով անախի բաժանվում է քեզնից,
Սրցունքները լուսե շողշողում են թևք] և
Արևքարի պես
Եվ դրանք միայն
Քեզնից հիշատակ պիտի մնան ինձ

Ես չգիտեի, որ այս աշխարհում չարն է
գերիշխում
Եվ հասու չէի որ հրճվանքն այստեղ չնչին է
այսքան
Եվ հանկարծ խոնավ աչքիցս պոկված
Մեն մի հակինթը
Մի ակնթարթում պատմեց այդ մասին

Թխկենուց հանդարտ պոկվեցին նրա ալ
տերևները
Եվ սակայն ցավել այդ մասին իրավ, հարկավոր
էլ չէ

Եվ ինչու՞ ցավել
Չէ՞ որ ճյուղքերի ճեղքերից հիմա
Լուսնի վառ լույսը մեզ կողողի

ՍՈՍԷՅ — ՀՈՍԻ

Եղե՛լ են արդյոք նախորդ դարերում
Մարդիկ, որ ապրած լինեն հազար դար
Մենք այդ չգիտենք
Ուրեմն քեզնից
Թող սկիզբ առնի հավերժությունը

«Հիմա կդառնամ», — շնչացիր ինձ,
Սակայն բառերն՝ այդ բառ էլ մնացին
Դու ետ չդարձար...
Լուսնյակի ուղում
Ես հետևեցի մինչև այգալույս

ՔԻ ՆՈ ՑՈՒՐԱՅՈՒԿԻ

Իիրտս անհանգիստ
Գատվեց ինձնից և սլացավ

Գարնանարույր լանջերն ի վեր
Անվերջ, անհուն մի օր ապրեց
Նա այնտեղ

**

Գարնան շամանդառ, ինչու՞ խլեցիր դու իմ
աչքերից

Հովին հանձնված ծաղկունքը բալի,
Որոնք ծփում են սարի լանջերին.
Նրանց ոչ միայն ցուլանքն է հրաշք,
Այլև թռչնումը

Փչում է քամին ուռչում է ալիքը,
Հեռանում է այն՝ հանդարտվում է նա
Հին ընկերներ են
Նրանք երևի,
Որ հեռվից հեռու զգում են իրար

Ինչպես բալենու նուրբ ծաղիկները
Ցուցում են լուրթ մթնշաղի մեջ,
Այդպես ահա դու
Շողացիր անցար,
Բայց հոգիս անապի լիքն է քեզանով

ՕՆԻԿՈՏԻ ՄԻՅՈՒՆԷ

Ինձ չի թվում, թե գիշերներն աշնանաբույր
Անվերջ են, ոչ
Եվ հետո, իրավ, էլ ո՞վ չգիտի,
Որ անգամ աշնան գիշերը անվերջ մի պահ է
միայն,
Եթե ննջում ես սիրելուդ կրծքին

ՍԱՅԳՅՈ

Հովտում այս
Սոխակներն ինձ միայնակ են թողել,
Որ ես պահպանեմ իրենց բները
Իսկ իրենք, անդու
Երգում են հեռու բլրակի վրա

Արի, շուտ արի
Դու իմ միայնակ այս կացարանը
Սալորենիներն են ծաղկել
Նման առիթով
Անգամ օտարը ինձ այցի կգար

Ախ , թե աշխարհում
Լուսինը փրթեք դեմքը չճածկեր ամպերի հետև
Եվ բալենին էլ չճաղկաթափվե ր
Այդժամ կապրեի ես անդորր հոգով
Առանց տագնապի այս զգացումի

ՆԱՅԵԼՈՎ ԾԵՐ ԲԱԼԵՆՈՒՆ, ՈՐԸ ՆՈՍՐ
ԾԱՂԻԿՆԵՐ ՈՒՆԻ

Մի առանձնակի հուզմունքով եմ մայում
Այս ծեր բալենու նշողերին
Թախծոտ են ծաղիկները
Ասա, դեռ քանի՞ գարուն
Կդիմավորես

Կկու, ընկեր իմ
Մահվանից հետո
Երբ ես կընթանամ լեռան կաճանով
Դու ինչպես այժմ,
Հենց այդ խոսքերով զրուցիր ինձ հետ

Մայր մտավ և մա
Զրեի գրկում

ՈՒԹԵՐՈՐԴ ԼՈՒՍԵԻ ՏԱՍԵՀԻՆԳԵՐՈՐԴ
ԳԻՇԵՐԸ

Այնպես էի տենչում
Որ կյանքս ձգվեր
Գեթ մինչ այս աշնան գիշերը
Մի պահ միայն հանուն լուսնյակի
Կյանքն ինձ ավելի թանկ թվաց

ԾՊՈՒՌԸ ԼՈՒՍԵՅԱԿ ԳԻՇԵՐԻՆ

Առանց ցող իսկ թափելու,
Ծաղկած մի ճյուղ
Պոկեմ
Լուսնի ցուլանքը վրան,
Ճպուռի երգով

ՓՈՒՋԻՎԱՐԱ ՍԱՏԱԻԷ

Իմ կամքից անկախ
Սիրտս հեռավոր լեռների
Կատարն է տենչում
Տարվա ընթացքում առաջին անգամ
Երկնում փայլում է լուսնյակն եռօրյա

ՍԻԿԻՍԻ ԿԱՅՍԻՆՆՈ

Ծաղկաթափվել են բալենիները
Հայացքս տարտամ զուր է թափառում
Շուրջս ամեն ինչ գունաթափվել է:
Լոկ գարնանային անձրևն է հորդում
Դատարկ երկնքում.

ՌՅՈՒՔԱՆ

ԿՏԱԿ

Ինձանից հետո
Ինչ եմ թողնելու աշխարհի վրա
Գարնանը՝ ծաղիկներ:
Ամառվա համար երգը կկույի
Աշնանը կարմիր այս թխկիները

ՕԿՈՒՍԱ ԿԱՏՈՄԻՏԻ

ԾԵՐՈՒՆԻՆ

Ծերուկն հարյուրամյա
Չահելներից լսելով,
Որ աշխարհում էլի
Ինչ որ բան է կատարվել,
Լոկ ծիծաղում է ի պատասխան

ԳԱՐՊԱՍՆԵՐԸ

Ահա այսօր էլ
Մի կերպ տուն հասա
Շուտով երևի դուրս կգամ դարձյալ
Այս դարպասներից
Որ էլ ետ չգամ:

ԻՍՅՈ

* * *

Աչքերս տեսան ամեն-ամեն ինչ
Բայց էլի դեպի Ձեզ եմ դառնում,
Ճերմակ քրիզանթեմներ

ՌԱՆՍԷՑՈՒ

* * *

Տարվա սուաջին օրն է
Վառ արևի տակ
Ճնճողուկների անվերջ գրույցն է

ԹԻՅՈՒ

* * *

Ալիքի վրա
Ծպուռն սեփական
Ստվերն է որսում

* * *

Այս կեսգիշերին լիպուսին է
Անգամ թռչուններն իրենց բների
Դուռը չեն փակել

* * *

Ով պայծառ լուսին,
Էս միշտ դեպի քեզ, քեզ եմ ընթացել
Սակայն դեռ այնքան, այնքան հեռու ես

ԿԻԳԱՔՈՒ

* * *

Ռոքան պայծառ է լուսնի ցոլանքը
Խսիրի վրա
Սոճու ստվերն է

ՕՆԻՑՈՒՐԱ

Ու՞ր թափեմ հիմա
Այս թասի ջուրը..
Ամենուր ծղրիդներն են երգում

ՋՅՈՍՈ

Թե դաշտ, թե լեռներ—
Գողացավ, տարավ իջած այս ձյունը
Միանգամից ամեն ինչ դատարկվեց

ԲՈՆՏՅՈ

Լողում են ամպերը...
Եվ զգուշորեն փայլուն լուսինը
Հեռուն են տանում իրենց ուսերին

ԲՈՒՍՈՆ

* * *

Դեպ արևմուտք է լողում լուսինը
Իսկ ծաղիկների ստվերներն այդժամ
Դանդաղ շարժվում են դեպի արևելք

* * *

Հողմ է սկսվել»,—
Հենց ճանապարհին ինձ զգուշացրեց
Ավազակը հին

ԽՍՍԱ

* * *

Այնպես բարձր է ճշում փաստանը,
Ասես թե ինքն է առաջին աստղի
Հայտնագործողը

* * *

Այլևս մեր մեջ օտարներ չկան·
Մենք եղբայրներ ենք մեկմեկու համար
Ծաղկած բալենու հովանու ներքո

* * *

Մտոր պիտի հատեն
Եվ սակայն անհոգ թռչուններն այնտեղ
Դեն բույն են հյուսում

* * *

Ծամփին մի վիճեք
Եվ մեկդ մեկու դուք սատար կանգնեք,
Զվող թռչուններ

ԲԱՍՅՈ

* * *

Այսուհետ մենակ ես պիտի քայլեմ
Գլխարկիս, սակայն, գրված է այսպես «Մենք
երկուսով ենք
Ցողով կլվամ

* * *

Նախօրոք պատրաստ համեմատությամբ
Օ ես չեմ կարող հրաշքի երգել,
Ենօրյա լուսին

ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Ինձ հետ միասին, նույն կտուրի տակ,
Երկու աղջիկներ փթթող ծաղիկներ
Միայնակ, տրտում մի լիպուսին

* * *

Ինչպե՞ս է սուլում աշնան պաղ քամին
Այնժամ դուք կզգաք իմ երգը միայն,
Երբ կգիշերեք աշնան մերկ դաշտում

* * *

Սիրահարված կատուները
Մի պահ լռեցին .
Ննջարան սահեց թխպոտ լուսինը

* * *

Մերկացած ճյուղին
Միայնակ ագռավ .
Աշնան երեկո

* * *

Թեքվել է ուռին և գիրհում է լուռ
Ու թվում է ինձ, թե սոխակը այն
Հոգին է նրա

Ծաղիկը թռչնեց
Արտասուքի պես
Ընկնում եմ, թափվում սերմերը նրա

ՍԱՆԵՄՈՐԻՒ ՍԱՂԱՎԱՐՏԸ

Օ , բախտ անողորմ
Արդ այս փառաշուք սաղավարտի տակ
Ծղրիդն է ճոռում

Ծովակաղամբի բարակ ցողուններ
Ավազ խշրտաց ատամներիս տակ
Եվ ես հիշեցի, որ ծերանում եմ

Սնվերջանալի, պաղ ու ցուրտ անձրև
Այնպես է նայում կապիկը մրսած,
Ասես ծղոտե թիկնոց է խնդրում

Առօրյա, տաղտուկ մայրաքաղաքը
Հանկարծ վեր հառնեց իր ամբողջ շուքով,
Երբ ես լսեցի ձայնը կկուի

Ճերմակ մի մազ ընկավ
Լիմ սնարի տակ
Անդուլ երգում է փոքրիկ ծղրիդը

Փոքրիկ կղզյակներ
Հարյուրապատիկ կոտորակվում է
Ծովն ամառային

ԸՆԿԵՐՈՋՍ

Դու այցելեցիր ինձ
Եվ իմ մեհուության պահերին տրտում
Լուռ տերևաթափ

1 ԱՆԱՍՏԵՂԾ ՌԻԿԱՆ ՍԳՈՒՄ Է ԿՆՈՋԸ

Վերմակ մեկի համար
Եվ պաղ, սգավոր ձմեռվա գիշեր
Անհատակ թախիժ

Չմեռվա օրեր միայնության մեջ
Կրկին թիկնում եմ
Հյուղիս պաղ սյունին

* * *

Հեռացող գարուն
Թռչունների ողբ Ձկների աչքեր՝
Արցունքներով լի

* * *

Սև, ծեր ամպիկը
Անշարժ կախվել է երկնակամարում
Կայծակ է տեղնում

* * *

Օ, որքան շատ են նրանք դաշտերում
Սակայն նրանցից և ամեն մեկը իր բույրը
ունի
Եվ դրանում է ծաղկի սխրանքը

* * *

«Արդեն աշուն է»,—
Հանդարտ շնչաց
Մինչև իմ բարձր սողոսկած քամին

* * *

Բացեք դռները,
Թող լուսնի լույսը
Ուկամիդոյի տաճար թափանցի

* * *

Անեն տարի էլ միևնույն բանն է
Կապիկն ամբողջին զվարճացնում է
Կապկի դիմակով

* * *

Ծախարը թիթեռի
Նրրհից հանում է
Արևով օծված մարգագետինը

* * *

Անդորր, լուսնյակ գիշեր
Լսվում է անգամ, թե շագանակի
Միջուկն ինչպես է կրծոտում որդը

* * *

Օ զարթնիր, թևիր,
Ինձ ընկեր դարձիր,
Ն իրհող թիթեռնիկ

* * *

Ծաղկաբաժակում
Ննջում է բողբ
Մի կոցիք նրան, ճանդուկ

..*

Անախի անապատում
Կառ կարմիր արև.. Սակայն պատ է անչափ
Սշման անգուր քամին

..*

Թիթեռնիկ արդեն
Նա էլ չի դառնա . Աշման պատ քամուց
Իզուր, իզուր է դողդողում որդը

ՖՈՒՏԱՄԻ ԾՈՎԱԽՈՐԾԻ ԱՓԻՆ, ՈՒՐ
ՍԱՅԳՅՈՆ Է ԱՊՐԵԼ

Գուցե այս քարը տարիներ առաջ
Թանաքաման է որպես ծառայել
Նրա փոսիկում ափեսափ ցող է

ԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Միանձնուհու պատմություն
Արքունիքում իր երբեմնի ծառայությունից
Ծորջս ամենուր ձյունի ճերմակն է

..*

Ընկնում է տերևի հետ
Ո չ, հապա նայիր կես ճանապարհին
Վեր թևեց միրհող լուսատուիկը

«ՄԱՀՎԱՆ ՔԱՐԻ» ՄՈՏ

Ժայռը թույն է շնչում
Խոտը ամենուր կարմիր գույն ունի
Եվ անգամ ցողը լուռ հրդեհվում է

Տանիքի համար եղեգն են հատել
Սրդեն մոռացված կարճ ցողունների
Լուռ ձյուն է տեղում

Ծաղկած թփուտներ,
Օ, գեթ մի գիշեր ապաստան տվեք
Ծանն անօթևան:

Գեղջուկը մի պահ
Դադարեց աղալ բրինձը ճերմապ
Լուսնին է նայում

Ծաղկած բալենու նուրբ ծաղիկներին
Ես էլ հյուր եղա
Օ՛, հրաշք օրեր

ԿԱՐՃԱՏԵՎ ՀԱՆԳԻՍՏ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՏԱՆԸ

Այստեղ վերջապես ծովը կնետեմ
Ես հողմահարված իմ հին գլխարկը,
Մաշված, ճղճղված ոտնամաններս

ԱՄԱՆՈՐԻՆ

Օ, քանի, քանի ձյուներ եմ տեսել,
Ու սակայն սրտով չեմ փոխվել նրանք
Ճյուղերը սոճու

Առաջին ձյունը պաղ արշալույսին
Նա միայն փոքր-իճչ գետին է հակել
Նարգիզի փխրուն ծաղկաթերթերը

Ջիլ թխկացնում է
Լքված հյուղակի միակ գերանին
Ծեր փայտփորիկը

Որքան արագ է լողում լուսինը
Անշարժ ճյուղերին
Անձրևի փոքրիկ, փոքրիկ կաթիլներ

* * *

Աղոթիր երջանիկ օրերի համար
Եվ ձմեռային սալորի ծառին
Նամանվիր սրտով

* * *

Ինչպե՞ս է փթթում խոտը ամռանը
Սակույն, ինչպես միշտ, միատերևը
ՍԼԱ մի շյուղ ունի

* * *

Մեկ ուրիշներին հրաժեշտ տվի,
Մեկ ուրիշները հեռացան ինձնից իսկ
ճամփի վերջում
Սշունն է Կիսո լեռներում

* * *

Ծագանակեանց մի պտուղ ընկավ
Նրան ով չի եղել հեռու լեռներում,
Նվեր կտանես

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՅՈՒՄԻՍ

Իշու՞մ ես, ինչպես էինք միասին
սանում ձյունի անբնական... Եվ այս տարի էլ
կրես այնտեղ էլի ձյուն լինի.

Արևը մայր է մտնում
Սարդուտայնն անգամ մթնշաղի մեջ
Հավում, մարում է

Մայիս ան անձրևները
Անդարձ թաղեցին զնգուն ջրվեժը,
Զրահեղձ արին

Ի՛նչ երանություն
Կանաչ բրնձի պաղազեփյուն արս
Չրի կարկաշուն

Ծուրջս անդորր է
Ժայռերի սիրտն է թափանցում
Ծղրիդի ձայնը

Սանդակոթ փայտյա,
Սալորենի է եղել երբեմնի,
Թնուպի՞ արդյոք

ՀՐԱԺԵԾՏ ՏԱԼՈՎ ԸՆԿԵՐՈՋՍ

Հրաժեշտի խոսքեր ուզեցի գրել
Նրա հովհարին
Ձեռքումս հանկարծ լուռ կոտորվեց այն

* * *

Դու մի մտածիր քամահրանքով,
Թե «որքան փոքր են բույսի սերմերը»
Զե՞ որ այդ բույսը կարմիր պղպեղն է

* * *

Սկզբում խոտերը լքեց...
Քիչ հետո լքեց նաև ծառերը
Օախը արտույտի

* * *

Աշունն էլ անցավ
Ի այց հավատում է գալիք օրերին
Ոյս մանրարինը

ԸՆԿԵՐՈՋՍ ԴԻՄԱՆԿԱՐԻՆ

Դարձիր դեպի ինձ
Իսկ էլ եմ թախծում
Ոչնայն այս անկյանք

Ծամփին մրսեցի
Խրտվիլակից ի՞նչ է,
Պարտքով շոր խնդրեմ

Գյուղական անդորր խաղաղության սեջ
Միայնակ տնակ... Անգամ փայտփորը
Դուռն այն չի թակում

ԼԻԱԼՈՒՍՆԻ ԳԻՇԵՐԸ

Ընկերս բրինձ ուղարկեց նվեր,
Դե, իսկ ես նրան իրե՛ն լուսնի մոտ
Հրավիրեցի

ՍԳՈՒՄ ԵՄ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԱՑՈՒԿՈՒՐԱ ՌԱՆՐԱՆԻՆ

Ու՛ր ես, իմ սատար
Ամուր թթեմուց պատրաստված ցուպս
Կոտրել է աշնան քամին

ԱՅՅԵԼՈՒՄ ԵՄ ՌԱՆՐԱՆԻ ՇԻՐՄԻՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄՍՎԱ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ

Դու էլ ես տեսել այն
Մանգաղի բարակ այդ շեղբը Հիմա
Այն շիրմաթմբիդ վերևն է փայլում

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՏՈՉՅՈՒՆԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ

Եկավ ու անցավ
Փայլուն լուսնյակը Մնաց մի սեղան
Չորս անկյուններով

* * *

Կանգնած վեհորեն
Չի էլ անատում բալի ծաղկումը
Կաղնին միայնակ

* * *

Քայլում եմ լեռնային կածանով
Եվ հանկարծ հոգուս մի բերկրանք պատեց
Փթթող խոտերից աչքով եմ անում մանուշակները

* * *

Դե, ինչ, գնացինք...
Հասկ կուտենք ճամփին,
Եվ մեզ անկողին կընտրենք խոտերը

* * *

Ուռին իր վարսերն է թափել...
Ի վիճակի չեմ այժմ տուն դառնալ
Թաղվել, խրվել եմ այդ վարսերի մեջ

* * *

Ծաղկած բալենուց
Ամառի քողի տակ դեմքն էր թաքցնում
Լուսինը շիկնած

* * *

Իրիկնադեմին բաղեղի հլու
Գերին եմ դարձել Անշարժ կանգնել եմ
Մոռացումի մեջ

! * * *

Ֆուձիի լանջին ստապիող հովիկ,
Հովհարիս թնին քաղաք բերեմ քեզ,
Հանց անգին նվեր

* * *

Անցա հարյուր թի
Ամպով երիզված հորիզոններում
Ես հանգիստ կառնեմ

ԱՄԱՆՈՐՅԱ ԱՌԱՎՈՏ

Ամենուր կաղնու ճյուղերն են խշշում
Որպես գիշերի հպանցիկ երազ
Շողաց ու անցավ երեսուն տարիս

* * *

Որքան անբնական է լիալուսինը
Ասես կաղնի են հատել արմատից
Շողարձակում է թարմ կտրվածքը

* * *

Կկվին դեպ իրենց
Կանչում են, կանչում հասկերը հասուն,
Ձեռքով են անում փետրախոտի պես

* * *

Ամեն ամեն ինչ, ախ անցավոր է,
Ծուխը փախչում է մոմի շուրթերից
Մաշվել, ծակվել է հին առագաստը

ՄԱՆԿԱՄԱՐԴ ԳԵՂՈՒՀՈՒՆ

Լոկ մի պահ շողաց
Իր նոր նոր փթթող գեղեցկության մեջ
Լուսնի լույս դեմքը

* * *

Տողոտ են վայրի վարդի թերթերը
Որքան տխուր են այժմ դաշտային
Ալ ծաղիկների փոքրիկ դեմքերը

ԳԱՐՆԱՆԸ ԹԵՅ ԵՆ ՀԱՎԱՔՈՒՄ

Բոլոր թերթիկներն արդեն քաղվել են,
Ու ինչ իմանան հավաքողները,
Որ թփի համար նրանք նման են աշնան ցուրտ
քամու

..*

Թիակներն սառած ջուրն են ակոսում
Ու համր է հոգիս
Գիշեր և արցունք

ՊԱՏԱՍԽԱՆ ԱԾԱԿԵՐՏԻՄ

Ես սովորական մահկանացու եմ
Հազիվ է ծաղկում բաղեղն իմ այգում
Իմ առավոտյան բրինձն եմ ուտում

ԾԵՐՈՒՆԻ ԴՈՒ ՖՈՒՆ

Հողմ բարձրացնելով հսկա մորուքով,
Տրտնջում ես դո՛ւ ուշ, ուշ աշուն է..
«Ախ, ո՞վ ,ասա, ո՞վ քեզ աշխարհի բերեց»

..*

Իմ գիշերային հանդերձը ծանր է
Իսկ անուրջներում ինձ թվում է, թե հեռու երկրում
Լուռ ձյուն է տեղում

ՆՈՂԵՐ ԲԱՆԱՄՏԵՂԾ ՍԷՄՊՈՒԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ

Քո շիրմին ահա ընծա եմ բերել
Ոչ թե լուտոսի նուրբ-նուրբ տերևներ,
Այլ դաշտային խոտ

* * *

Իմ նեղիկ հյուղի
Չորս անկյունները վառ լուսավորեց
Չղանցքից նայող պայծառ լուսինը

* * *

Գինի ըմպեցի
Եվ ավելի շատ քունս չի տանում
Գիշերվա կեսին լուռ ձյուն է տեղում

* * *

Ինչ պաղ է ջուրը
Ծայն անգամ միրհել չի կարողանում
Ծոճվում է, ճոճվում ջրերի վրա

ՀԵՌԱՑՈՂ ԸՆԿԵՐՈՋՍ

Հիշիր, միշտ հիշիր
Թավուտում թաքչող
Ծաղկած սալորը

* * *

Էլ, փոքրիկ հովիվ
Սալորենուն գեթ մի քանի շիվ թող՝
Ծիպոտ կտրելիս

ԸՆԿԵՐՈՋՍ, ՈՐ ԾԱՄՓԱ Լ ԸՆԿԵԼ

Թռչնակի կողմից լքվել է բույնը...
Որքան տխուր է անընդհատ նայել
Քո մոտ դրկիցի դատարկ տնակին

* * *

Դաշտերի անծայր տարածքի վրա,
Հողին ոչնչով երբեք չկապված,
Արտույտն է երգում

* * *

Ծաղկած դեղձենի
Նրա հետևում
Տարվա առաջին բալն է լուռ ծաղկում

* * *

Բալի ծաղիկներ, մնացեք բարով
Ծնորհապարտ եմ հյուրընկալության
Եվ ձեր աճահիման բարության համար

* * *

Արևոտ օրվա ալ կարմիր տապը
Մագամի գետը
Դեպի ծովերի խորքերն է քշում

ՎԱՂԱՄԵՌԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԻՍՍՅՈՅԻ
ՇԻՐՄԱՔԱՐԻ ՄՈՏ

Սարսուռ, բլրակ,
Դաշտում թափառող աչնան ցուրտ քամին
Միայնակ տխուր իմ հառաչանքն է

* * *

Ցանկացա բախս ես փոքր ինչ մաքրել
Գնալուց առաջ Տանարի կողքին
Ուռենին իր հեզ թ՛րթերն է թափում

* * *

Աշուն է Մենակ եմ տանը.
Դե ինչ, էրևի պտուղ ժողովեմ
Շյուղերից ծառի

* * *

Միայնակ մի հյուղ.
Լուսին քրիզանթեմներ. Ու դաշտի
Փոքրիկ, փոքրիկ մի կտոր

ԿՏԱՎԻՆ, ՈՒՐ ԳԻՆՈՎ ԼԻ ԳԱՎԱԹԸ
ՋԵՌԲԻՆ ՄԱՐԴ Է ՊԱՏԿԵՐՎԱԾ

Ոչ լուսին և ոչ էլ ծաղիկներ
Ու դրանք նրան թերևս պետք չեն
Միայնակ, խոհուն գինի է ըմպում

Բոլոր չորս կողմից
Ծաղկած բալենու նուրբ թերթիկները
Դեպի Նիո լինն են թռչում

Արտույտն է երգում,
Իսկ թավուտի մեջ
Փասիանը նրան արձագանքում է

Լուռ սպասում ենք լուսնի գալուստին
Սալորի ճյուղ է տանում իր ուսին
Ջահել քահանան

Մեղմ ու գոլ հովիկ
Թեյը ընտիր է Եվ գինին նույնպես
Լուսնազարդ գիշերն, օ՛, հրաշալի

Սնդորր գիշեր է
Լոկ պատին կախված նկարի տակից
Շոռիկն է ճոռում

Փայլում է շաղը
Սակայն նա, ավաղ, թախծի բույր ունի
Դա մի մոռացեք

Տերևաթափ է
Եվ միագույն է ամբողջ աշխարհը
Ու քամին է լոկ, որ դեռ շաշում է

Որպեսզի քամուն իրենց արբեցնող բույրերով
օժեն,
Ուշ աշնան վերջին կրկին բացվել են
Ոյս ծաղիկները

Օ, որքան լավ է,
Գիշերը ճերմակ ձյան կվերածվի
Զմռան անձրևը

«Երեխաներից, չէ, հանգիստ չկա»
Այդ մարդկանց համար
Բալեան ծաղկումն իսկ արժեք չունի

~

Տգեղ, սև ագռավ
Մակայն անգամ նա շատ գեղեցիկ է
Առաջին ձյունի ճերմակի վրա

~

Դեռ ձյուն չի եկել
Մակայն զգալով ապագա բեռը
Գետին է հակվել եղեգնը խոնարհ

ԴԵՐԱՍԱՆԸ ՊԱՐՈՒՄ Է ԱՅԳՈՒՄ

Դիմակին եղած երկու ճեղքերից
Նրա աչքերը նայում են այնտեղ
Դեպի լուսոսի փթթող թիերը

~

Լուսինը կոթնել է սարին
Ստորուրը ողջ մառախլապատ է
Դաշտերից հանդարտ ծուխ է բարձրանում•

Աշնան այս թուխարը
Նոսրացնում, ապա հեռու է քշում
Երկու ընկերոջ հանդարտ զրույցը

Ինչից է տեսնես,
Որ թեևց այս աշնանն ես նկատեցի, որ ծերացել
եմ
Թռչուններ և ամպ

ՄԵՌԱԾ ՄՈՐՍ ՎԱՐՍԵՐԻ ՓՈՒՆՁԸ

Կհալվի ափերի մեջ իմ մերկ,—
Այնքան որ ջերմ եմ իմ արցունքները,—
Ծերմակ վարսերի եղյամը անդարձ

**

Դու էլ թախճոտ ես,
Որքան որ այստեղ զոհված Յուստոմոյի սիրտը
Օ , աշնան քամի

Մինչև մայրաքաղաք
Միայն երկնքի կեսն է մնացել
Ձնաքեր ամպեր

**

Ձմեռվա արև
Ստվերս դանդաղ դանդաղ սառչում է
Իմ ձիու մեջքին

* * *

Նա ընդամենը ինն օրական է
Բայց գիտե դաշտը ու լեռը գիտե
Գարո լն է կրկին

ՄԱՀԱՑԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍԵՆԳԻՆԻ ԱՅԳՈՒՄ

Օ, որքան հուշեր
Արթնացրիք իմ մեջ,
Հին բալենիներ

ՍՅՑԵԼՈՒՄ ԵՄ ԻՄԷ ՏՍՇԱՐԸ

Ո՞ր եմ, որտե՞ղ եմ այս ծաղիկները,
Ավաղ, չգիտես
Սակայն զգում եմ ես նրանց բույրը

Թախծով խորհում եմ Ձոգի միամիտ
հավատի մասին, որը իր ողջ շորերը
բաժանեց
աղբատներից

Ես էլ կարող եմ մերկանալ
Սակայն հետո էլ հագնվել է պետք,
Ցուրտ է ու քամի

ՀԱՆԴԻՊԵԼՈՎ ՏԵՂԱՑԻ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ

. Ու նախ և առաջ ես կհարցնեմ
Ինչպես է կոչվում տեղի բարբառով
Եղեգնն այս ջահել:

ԻՍԷ ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ

Սալորի փոքրիկ ծառերն են ծաղկել
Ջահել քրմուհիների օթևանի մոտ
Ի՞նչ գեղեցիկ է

* * *

Մանապարհ ընկնենք Ախ, իմ հին գլխարկ:
Ես քեզ ցույց կտամ ինչպես են ծաղկում
Բալենիները հին Յոսիմայում

* * *

Խուլ շնչումով
Թափվում են վայրի վարդի թերթերը
Ջրվեժի հեռու հեռու արձագանք

* * *

Հեռացող գարնան հետևից, ավառ,
Հեռավոր Վակա նավահանգիստում
Ես հազիվ հասա

* * *

Ագռավին ձկնորսն հեռու է քշում
Լարած աղեղի սուր հայացքի տակ
Կկուն է դողում

* * *

Ջանգը լռեց հեռվում,
Բայց իրիկնային ծաղիկների բույրը
Բերում է նրա արձագանքները

* * *

Կկուն հեռու է թևում,
Բայց ձայնը նրա
Մեղմ սփռվում է ջրերի վրա

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Ձկներից և թռչուններից
Չեմ նախանձում այլևս Կմոռանամ
Տարվա ողջ թախիծը

* * *

Լողում է տերևը դեղին
Ո՞ր ափին արդյոք
Կարթնանաս նիրհից, նպուտ

* * *

Հիմ, փոքրիկ լճակ
Սյա հայելին հանկարծ նկվում է գորտի
նստյունից
Ջրի ցալքուններ անդորր խավարում

* * *

Ծովախոտի մեջ անթիվ, անհամար
Մանր ձկնիկներ բայց ափերիդ մեջ
Նրանք հավվում են եղյամի մման

Ծովակաղամբը շատ շատ թեթև է
Սակայն ծերունին յուռ քարշ է տալիս
Ծանր ոստրեի մեծ կողովները

* * *

Ծյուղերից թափվում են պտուղները
Աղմուկով վեր են թևում սարյակները
Վաղորդյան քամի:

* * *

Խուլ ճրթնրթոցով կուծը փուլ կկավ
Ջուրը գիշերը սառել էր այնտեղ
Հանկարծ արթնացա

Վալ, պաղ աղբյուր
Ուրբիս վրայով վերև է վազում
Խորրիկ մի խեցգետին

Այ՛, ունը անգամ չի մարել կյանքի ծարավը
Փոքրիկ թիթեռնիկի մեջ: Ընայում է փութով
Բլիզանթեմի փայլփլող ցողը

Բազմահաճ ագռավ,
Մի՞թե կարող ես հին բույնդ գտնել
Շուրջդ ամենուր սալորն է փթթում

Անվերջ դեսուդեն է ընկնում ճպուռը .
Ոչ մի կերպ չի կարողանում կառչել
Խոտի ճկուն ցողուններին

Գիտակի քմայք
Շել է թիթեռն
Սնբույր ծաղիկին

Ուշ, ուշ աշուն է
Միայնակ նստած ես մտածում եմ
«Տեսնես ինչպե՞ս է իմ հարևանը»

Մեզ է, ու արդեն անձրև է տեղում
Չեմ տեսնում Ֆուձին: Բայց այն, որ նա կա,
Խիստով է լցնում իմ սիրտը հիմա

Նիրհել եմ ձիու վրա
Ու քնիս միջից տեսնում եմ հեռու հեռու լուսինը:
Ինչ որ տեղ առտվան ծուխն է բարձրանում

Աշունը անցավ
Արդեն թևերն է տարածում
Կեղևն շագանակի

Եկել եմ հիանալու Ուէնցի բալենիներով:
Մարդիկ առանձնացել են վարագույրներով, ու-
րախ երգեր են երգում: Իսկ ես հեռվում, սոճու
խիտ ստվերում, նստած եմ միայնակ.

Առջևս
Չորս սովորական գավաթներ են
Եվ ծաղիկները մեռակ եմ դիտում

ՏԱՍԵՎԵՑԵՐՈՐԴ ԳԻՇԵՐՎԱ ԼՈՒՍԻՆԸ

Հուշիկ դուրս լողաց
Եվ ամպերի մեջ
Խոհերիճ տրվեց ճերմակ լուսինը

ԻՍԻԿԱՎԱ ԹԱՔՈՒԲՈՔՈ

Որքան թախծոտ ես դու,
Եվ անկյանք, ավազ
Հագիլ սեղմում եմք քեզ ափերիս մեջ՝
Թույլ մի շրշումնով
Թափվում ես, թափվում մատներիս միջով

Հսկայական ծովի հանդեպ
Միայնակ եմ ես:
Ահա արդեն որերորդ անգամ,
Երբ արցունքներն են սեղմում կոկորդս,
Հեռանում եմ տնից

Այնտեղ, ուր արցունք է ընկել,
Ավազահատիկներից
Մի խոնավ կույտ է գոչանում
Որքան ես ծանրանում, դու չ,
Արցո՛ւնք

* * *

Ավագաթմբին
Երկար պառկած էի
Երեսի վրա
Ու մտքերիս մեջ հեռավոր ցավն էր
Առաջին սիրո

* * *

Հուսահատորեն
Մաչքս ձայն տվեց
Եվ միայն աչդամ ես նկատեցի,
Որ փայտիկներով գավաթի կոնքին
Հարվածում եմ անմիտ

* * *

Առանց նպատակի
Դուրս եմ ելնում տնից
Առանց նպատակի
Վերադառնում
Ընկերներս ծիծաղում են ինձ վրա

* * *

Ասես ինչ-որ տեղ
Մեղմիկ լալիս է
Ծղրիղը
Այնպես տխուր է
Իմ հոգին հիմա

* * *

Վերցրի հայելին
Եվ սկսեցի
Կապկություն անել ←
Այնքան, ինչքան կարող էի
Երբ հոգնեցի ես արտասուքներից

* * *

Արցունքներն, իրոք,
Հրաշք են մեծագույն:
Եվ արտասուքով լվացված
Սիրտը
Կրկին պատրաստ է հրճվանքի

* * *

«Եվ միայն դրա համար
Մեռնե՞լ».
«Եվ միայն հանուն դրա
Ապրե՞լ»
Թող և մոռացիր վեճն այդ անհմաստ

* * *

Եվ ես բարձրացա գագաթը լեռան
Իմ կամքից անկախ,
Ուրախությունից
Թափահարեցի գլխարկս
Կրկին վար իջա

Զայրույթի պահին ես ուզում էի
Ծաղկամանը փշրել
Ախ, փշրել միանգամից—
Ինձսուցինք էլ—
Ու մահանալ

Զգիտեմ ինչու
Երազում էի
Ես գնացք նստել
Բայց ահա իջա
Եվ գնալու տեղ չունեմ այլևս

Դատարկ մի տուն
Մտա
Եվ ծխեցի մի քիչ.
Այնպե՛ս էի ուզում
Մեճակ մնալ

Զյան այս նրբահյուս, փափուկ շեղջի մեջ
Աչքովդ այտերով
Խրվել ու մնալ .
Նման սիրով եմ
Տեճում ես սիրել

Միայն հորանջել,
Եվ չմտածել ոչնչի մասին
Կարծես թե նոր ես
Արթնացել երկար,
Դարավոր քնից

Ծոյվա՞ծ եմ գովքից
Ոչ, զայրացա՞ծ՝ եմ
Որքան տխուր է,
Երբ քեզ դու գիտես
Առավել քան լավ

Անցել եմ այն լավ ժամանակները,
Երբ սիրում էի
Ես պատահական
Ինչ-որ դուռ բախել,
Որպեսզի մեկը վազեր ընդատաջ

Երեկ մարդկանց մեջ
Ես ընտրյալ էի,
Մտքի տիրակալ
Բայց ավաղ, հետո—
Հոգուս իջել էր անափ տխրություն

* * *

«Լավ է ն այս,
Լավ է ն այն» —
Հաճախ ես լսում տարբեր մարդկանցից
Ես նախանձում եմ
Մտքերի նման թեթևությանը

* * *

Այդպես մինչև վերջ
Զուր կլանելով,
Խիստ ծանրանում է ծովասպունգը
Այդպես ծանրության այդ զգացումը
Սճում է, աճում իմ հոգում հիմա

* * *

Ընկեր իմ,
Աղքատին զուր մի նախատիր,
Որ խղճուկ է նա
Քաղցած
Ես էլ եմ նրան նմանվում

* * *

Ես անմնացորդ բացեցի հոգիս
Զրույցի պահին
Սակայն ինձ թվաց,
Որ ինչ որ մի մեծ բան եմ կորցրել
Փութով լքեցի ես ընկերոջս

Սշխատիր,
Գործիր: Բայց ի՞նչ դրանից
Կյանքը դրանից թեթև չի դառնում
Սնթարթո նայում եմ
Ես իմ ձեռքերին

Բառեր,
Որոնք հաշտնի չեն մարդկանց
Հանկարծ ինձ թվաց,
Թե դրանք գիտեմ
Միայն, միայն ես

Բաց կանաչը
Խմեա
Եվ դառնաս թափանցիկ,
Ինչպես ջուրը. .
Ա՛խ, թե այդպիսի մի հեղուկ գտնեն

Ես նոր սիրտ էի փնտրում ինձ համար
Եվ ահա այսօր
Մեն ու միայնակ թափառում էի
Խող փողոցներով
Նրանց անուններն անգամ չգիտեմ

Կնախատեն երեխային
Եվ կարտասպի նա
Օ, սիրտ իմ մանկութ Օրերի,
Իմ հեռավորքս
Ես ինչպե՞ս, ասա, վերադարձնեմ քեզ

Ամեն մեկի սրտում,
Եթե իսկապես
Մարդ արարած է,
Տներում է անհայտ
Մի կալանավոր

Ուղիղ խնուղին հեռուն է գնում
Այսօր զգացի
Ծատ որոշակի,
Որ այդ փողոցն էմ
Ելել վերջապես

Հագիվ լսելի ես շնչացի
Իմ իսկ անունը,
Եվ արցունքներս հանկարծ ցայտեցին
Տասնչորս տարեկան էի
Գարնանն այդ անդարձ

Կապույտ երկնքում
Հալվող, մաշվող ծուխ,
Ծո՛ղխ, հեռուներում լուռ անհետացող,
Ու՛մ ես հիշեցնում:
Մի՞թե ինքս ինձ

Ընկերս հետո
Հանկարծ լքեց ինձ,
Բայց խաղում էի՜նք—
Այն տարիներին,
Գիրք էի՜նք կարդում հաճախ երկուսով

Դասարանի պատուհանից
Ես դուրս թռա՛. Երկար-երկար
Պառկել էի միայնակ
Անդ վերևում,
Կործանված դղյակի ստվերների մեջ

Փարթամ խոտ է աճում արդեն
Կոճուկատա դղյակի ավերակներում
Խոտերին պառկած երկի՜նքն էի դիտում,
Եվ երկի՜նքն ինձ տարավ իր հետ
Օ՛, տասնհինգամյա իմ սիրտ

Ես միշտ էլ ուզում էի սուլել,
Երբ հանկարծ
Կապուտակ երկնին էի նայում
Օ , որքա ն ուրախ էի
Սուլու՜մ ես

Գիշերներն անգամ
Ես սուլում էի
Սուլոցն
Իմ երգն էր
Տասնհինգ տարեկանում

Աշնան խոտերի թավուտում,
Դպրոցական գրադարանի ետևը,
Բազմաթիվ դեղին ծաղիկներ կային,
Ինչպե՞ս են կոչվում.
Մինչև օրս էլ ես դա չգիտեմ

Հիշում եմ,
Ուսուցիչը պատմում էր մեզ,
Թե ինչպես իր կյանքը անդարձ
Կործանեց մի մարդ
Հանճարե՛ղ մի մարդ

Ինչպես որ քարը
Վայր է գլորվում
Բարձրաբերձ սարից,
Այդպես ահա ես
Ընկա այս օրը

Մանչուկի աչքերում
Նախանձն է բույն դրել
Ա՛յ, թռչունն է թռչում
Թռչում է,
Երգում .

Բարաձիմայի
Սոճու ծառուղով
Մի ջահել աղջիկ քայլում էր ինձ հետ
Նա այնքա՛ն հավատում էր
Իր տաղանդին

Երբ ցավում էին աչքերս,
Սև ակնոցներ էի հագնում
Եվ ահա այդժամ ես սովորեցի
Լաց լինել այնպես,
Որ ոչ ոք չգտա

* * *

Այս օր երին
Մայրս
Գյուղը հիշում է
Ավելի հաճախ
Շեմքին աշուն է

* * *

Նա մի ժամանակ
Ամուր, այրական
Կամքով էր օժտված
Որտե՞ղ է հիմա
Ինչի՞ մասին է մտածում տեսնես

* * *

Ասես թե կործանման եզրին
Իրիկվա մթնշաղում հալվում է
Ամեն, ամեն ինչ
Եվ ամեն տեղից
Թախիծ է հորդում

* * *

Ճերմակ լեռնվարդի
Ճյուղը կոտրեցիր
Դու իմ այգու մեջ
Լուռ փայլատում էր
Լուսնի մանգաղը

* * *

«Վիշտն հասու է նրան,
Ով կարդում է սրանք»—
Այսպես բարբառեց
Եվ հրո՛ւն անրակ դարձրեց գրքերը
Ով մե՛ծ իմաստուն, դու՛ն հիշտ վարվեցիր՝

* * *

Այս տանը,
Այս պատուհանի մոտ
Ես և Հիդեկոն միասին
Գարնան գիշերով լուռ լսում էինք
Գորտերի շլոռը երգը

* * *

Աշնան սկիզբը
Պաղ ջրի է նման,
Որով ցողվելով
Նորանուն են քո
Նաև մտքերը

* * *

Աշնան խաչուղի
Սլացավ բոլոր
Երեք ճամփերով
Հանդուգն քամին—
Ու կորավ հեռվում

* * *

Սշնան ձայնը
Սկզբում
Հազիվ, թույլ նշմարելի
Եջունջ է դառնում ականջներիս մեջ
Տխուր սովորույթ

* * *

Հայացքի համար
Ծանոթ, սովոր լեռ
Բայց բավական է, որ աշունը գա,
Թաքուն մի դողով կրկին նայում ես
Գուցե աստվածներն այնտե՞ղ են ապրում

* * *

Թույլ շնչոգով
Անձրևն է թափվում,
Նայում եմ
Բակի խոնավ քարերին
Սրտասուքներս լուռ չորանում են

* * *

Ընդամենը փորձ է
Սակայն ես կրկին նույնն եմ,
Ինչ պատանության պայծառ օրերին,
Եվ մտածում եմ «Մի ընկեր գտնեմ,
Որպեսզի ամեն ինչ պատմեմ նրան»

* * *

Զգիտեմ, թե երբ
Անգամ արտասպել չկարողացա
Եվ մի՞թե չկա գոնե մե՞ն մի սարդ
Որը իմ հոգին, օ , հուզի այնչափ,
Որ ես արտասպել

* * *

Օ, գոնե մի պահ
Մոռանալ ամեն ինչ
Այդպես գարնանը
Սալաքարերն են
Թաղվում կանաչում

* * *

Կարծես ինչ որ պահ
Իմ օրորոցում
Տեսել եմ նրան
Իմ երազի մեջ
Նրան, որն այնքան սիրելի է ինձ

* * *

Աշնան երկի՛Քը
Դատարկ, դատարկ է ծայրից մինչև ծայր
Մի սուվեր անգամ չես գտնի այնտեղ
Որքան մե՞նակ ես դու երկնակամար
Գոնե մի ագռավ թևեր քեզանով

* * *

Լուսի և
Անձրևից հետո
Կտուրների
Խոնավ գանգերը
Փայլկտում էին տխուր շողերով

* * *

Այն օրը, երբ քաղցում էի ես,
Բարակ պոչիկը տարուբերելով,
Ինձ մի սոված շուն մոտեցավ
Եվ լուռ հայացքը հանեց աչքերիս
Ես ինձ մի փոքր թեթև զգացի՝

* * *

Ճոռում է ճպուռը խոտերում
Նստած եմ մեռակ
Ճամփեզրի քարին
Ծիծաղ-արցունքով գրույց եմ անում
Ես ինքս ինձ հետ

* * *

Ջերմ արցունքները
Հոսում էին
Ինչպես առաջին սիրու օրերին
Եվ դա ինձ համար հրճվանք էր անեզր
Անմոռաց մի օր

* * *

Հոր նման
Դաժան է աշունը
Մոր նման
Աշունը բարի—
Անօթևան որդու համար

* * *

Աշունը եկավ
Միրո տաօնապը
Էլ չի դադարում և ոչ մի վայրկյան
Ողջ գիշեր քուն չի գալիս աչքերիս
Վայրի բաղերի կոհնչ

* * *

Ս նմոտուկներ
Որքան շատ բան է
Անունը ասում
Ինձ ծաղիկներն այդ ուղարկել է նա
Որը լռում է

* * *

Ասես անձրև շրմիաց
Անտառի գլխին
Կապիկներ են անցնում
Եվ որքա ն են նրանք
Նման մարդկանց

Սկզբում անտառներն են եղել,
Ամենուր անտառներ են եղել:
Կիսաստվածները
Նրանցում էին պահում
Լրակը

Անվերջ ու անեզր
Զգվում են մ՛ռաժ լավուզները
Աստվածն,
Որ ապրում է Գորի անապատում
Հիրավի, աշնան աստվածն է

Ցուլանքը լուսնի
Եվ իմ թախիժը
Ափեափ լցրին կրկիր ու երկինք
Կերպատիոխվելով
Աշնան գիշերի

Գիշերային թախճոտ ձայները
Դանդաղ թափվում և խաղաղության մեջ
Ես թափառում եմ միայնակ
Ասես թե դրանք գետնի վրայից
Հավաքում հատ հատ

* * *

Ես լրտ հաշվեցի
Իմ տարիները
Հևտո հաշացքս առավ մատներիս—
Եվ հեռուն ձգվող իմ ճանապարհից
Հրաժարվեցի

* * *

Ելաւեղ
Իմ ետևից
Եկան մայրս ու կինս
Սպրում են օտար վայրում,
Ուր ոչ մի ծանոթ չկա

* * *

Չահել ուսուցչուհի
Ինչպես խամրած է
Փայլիւում նրա
Ակնոցների
Ոսկու շրջանակը

* *

Հորանջս կուլ տվի
Մենք հրաժեշտ տվինք միմյանց
Գնացքի պատուհանից
Որքան հաճախ եմ
Հրաժեշտ տալիս

* * *

Գիշերվա մութում
Փայլում էր ծխախոտի խեղճ կրակը միայն
Այնտեղ, ուր ալյակք
Բախվում են ափին,
Երկար ժամանակ մի կին էր կանգնած

* * *

Տխուր է
Օթարուի փողոցներում
Ոչ, երբեք չեն երգել այս մարդիկ
Այնպես կոպիտ են
Նրանց ձայները

* * *

«Կիսիեմ»,— ասում էիր ինձ
Ասում էի
«Խփիր»
Ախ, էլի դառնալ այնպիսին,
Ինչպիսին էի տարիներ առաջ

* * *

Հանկարծ գունաթափ,
Մինչև կապտելը գունաթափ այտին
Արցունք հայտնվեց
Մահվան մասին էր անդադար խոսում
Մի երիտասարդ վաճառական

* * *

«Խռովահույզ հոգու
Ասես մի զանգված է
Անմնացորդ դարձել
Միհար ու սմբած մարմինը քո»,—
Սյրպես ասացին ինձ մի անգամ

* * *

Ես ընկերոջս,
Որպես թշնամու սաստիկ ատեցի,
Բայց երկար, երկար
Ձեռքն էի սեղմում
Բաժանման պահին

* * *

Թաղված է ճերմակ ձյան ներքո
Սորատի գետը
Անգամ թռչուն էլ չկա նրա շուրջ
Միայն ծառախիտ նրա խուլ ասիին
Միայնակ ինչ որ մի մարդ է կանգնած

* * *

Վերջին կայարանում ցած իջա:
Լույս է ամենուր ձյունի ճերմակից
Ես դեպի փոքրիկ, խուլ գյուղն եմ
Գնում
Համր քայլերով

~

Ուսիս սեղմված,
Ծերմակ ձյունի մեջ
Կանգնած էր նա մութ ու խուլ գիշերով
Որքան տաք էին
Նրա ափերը

* **

Երագիս մեջ ձայնդ
Հնչում էր ականջիս
Օ, որքան վաղուց
Չեմ լսել ես քեզ:
Ինքս էլ չեմ հիշում որքան ժամանակ

* **

Իմ հյուսիսային թափառումները
Հուզմունքից կարծես դողացող ձայնով
Երկար ու երկար
Ես երգում էի
«Այիքներն ավագ են լվանո մ»

* **

Եո՛ւ առնում էր տախտակն հատակի
Իմ ոտքերի տակ
Եվ այնպես ցուրտ էր
Նախասեզյակում
Եվ հանկարծ հրածեշտի համբույր

* * *

Ինչպես ճամփորդը
Քամուց դողացող,
Իր հանդիպածին հարցնում է ճամփան,
Սյդպես, աչդպես եմ
Խոսել ես քեզ հետ

* * *

Կարծես թե նյանց խորքը
Երկրի լուրջ լույսն է խմում անհագուրդ
Ես մինչև այժմ
Իմ աչքերի դեմ տեսնում եմ նրա
Սևաթ քիթերը

* * *

Սմենագլխավորի մասին
Ես այն ժամանակ
Ոչինչ չասացի
Սակայն խոսքերն աչդ
Սպրում են հոգումս:

* * *

Ինչպես խոր ճաքը
Ծերմակ լուսամտիփին,
Աչդպես անանց է
Հուշն
Հրածեշտի

Անտարքեր տեսքով
Խոսում էի ես
Անտարքեր տեսքով
Լսում էիր դու
Ահա, թերևս, այն, ինչ եղել է

Ինչպես օտարության մեջ
Լեռների որդին
Միշտ իր հեռավոր լեռներն է հիշում
Այդպես էլ ահա թախծի պահերին
Ես քո մասին եմ խորհում շարունակ

Երբ ինձ թվում է,
Թե մոռացել եմ,
Ամեն մի մանրուք
Քեզ է հիշեցնում
Ոչ չեմ կարող մոռանալ

Ես լսել էի,
Որ դու հիվանդ ես
Հետո լսեցի ապաքինվել ես
Չորս հարյուր թի քեզանից հեռու
Կարծես երազի մեջ էի քայլում

* * *

Եթե փողոցում ես պատահաբար
Մի ինչ-որ ծանոթ իրան եմ տեսնում,
Սիրոս խաղում է
Իր մութ վանդակում
Խղճա՛, խղճա՛ ինձ

* * *

Իմ այս խելագար, խելագար կյանքում
Ծատ է պատահում,
Որ հանկարծ կանգնում ու խորհում եմ ես...
Դու գիտե՞ս, գիտե՞ս,
Արդյոք, ո՞ւմ մասին

* * *

Տարին վազում է տարվա ետևից:
Քեզանից հեռու,
Ամեն տարվա հետ
Ավելի ուժգին
Ես սիրում եմ քեզ

* * *

Երեք տարվա մեջ
Ընդամենը երեք նամակ քեզանից—
Ոչինչ ավելի .
Բայց ես քեզ գրած կլինեմ
Երևի թե չորս անգամ

* * *

Ձեռնոցս էի հանում
Եվ հանկարծ
Ձեռքս կարկամեց
Սրտիս վրայով
Սի հուշ գլորվեց

* * *

Կարող է այդպես տխուր եմ հիմա,
Քանի որ շուրջս
Վառ գույներ չկան
Մեկի՞ն խնդրեցի,
Որպեսզի կարմիր ծաղիկներ գնի

* * *

Իմ լո սամուտը
Խավարել է
Անձրևից, փոշուց
Ես էլ այդպիսին եմ դարձել
Որքա՞ն տխուր է

* * *

Ուղիղ վեց տարի
Իմ հին գլխարկը
Ես հագնում էի
Ամեն, ամեն օր
Սակայն անգամ այն ես կորցրեցի

* *

Տես այն կիսակույր
Ու ջահել կինը համր կանգնած է
Փեղկերը բացած պատուհանի դեմ
Գարնան անձրևի նուրբ կաթիլները
Դեմքն են շաղոտում

* * *

Քայլում եմ
Գարնանային փողոցով
Պատի ցուցանակին
Գեղեցիկ մի սակագրություն կա
Կանաչի անուն.

* * *

Ջահել ծառերի նրբագույն բույր
Ալեկոծում է
Ողջ նոր փողոցը
Ոչ մի ձայն չկա
Գարնան անդորր է

* * *

Երեկոյան
Հիվանդանոցի պատուհանում
Ինչ-որ մեկի ճերմակ ճերմակ
Դեմքը.
Չգիտեմ ինչու՞ հանկարծ հիշեցի

* * *

Լոկ մեկ համբույր
Երկար
Եվ մենք միմյանց հրաժեշտ տվինք
Կես գիշերային փողոցում
Արևի հեռու փայլատակումներ

* * *

Փոքրիկ,
Երկնագույն սափորից
Կաթ է լցնում
Գողդողացող մի ձեռք
Միրելի մի ձեռք

* * *

Թողեցի հենց բառի կեսին
Իմ անհիմաստ գիրը...
Ես մարդկանց կարիքն զգացի,
Եվ ելա փողոց,
Մարդկանց մոտ

* * *

«Նա գալու է», — ասացին ինձ
Ես վաղ արթնացա
Անհանգստացա,
Որ ավաղ, արդեն էլ թարմ չեն այնքան
Թևքերն իմ ճերմակ վերնաշապիկի

* * *

Արաւոտ ծեգին
Հագիւմ հասցրի եւ գնացք նստել
Ճանապարհի աշնան սկզբին
Չորացած հացի
Փոքրիկ մի կտոր

* * *

Եվ մենք հրաժեշտ տվեցինք իրար
Գիշերային գնացքում,
Մի կիսախավար պատուհանի մոտ
Եւ անվերջ ձեռքումս շուռումուռ եմ տալիս
Կանաչ մի խնձոր

* * *

«Տարաբախտ իմ սեր»,—
Եւ շնչում եմ ինքս ինձ համար
Կեսգիշերն անց է
Մարող՝ կրակին
Ածուխ եմ լցնում

* * *

Խոնավ շղարշով պարուրված աչքեր,
Այտին՝ սև մի խալ
Ահա ամենը, որ եւ հիշում եմ,
Երբ որ աչքերիս առջև է գալիս
Կինը հեռավոր մի բարեկամիս

* * *

Խոտերի վրա
Խեղճ, բարակաձայն,
Ծղրիդն է ճռռում..
Ամռան մարգի մեջ
Նամակ եմ կարդում

* * *

Անձայն գիշերով թվաց ինձ հանկարծ,
Որ իբրև իմ յղջ մաշկը մարմնի
Լարված ականջ է...
Քաղաքի նիրհող, խուլ լռության մեջ
Բիրտ կոշիկների բիրտ ոտնաձայներ

* * *

Գիշերվա կեսին
Կայարան եկավ մի անժամոթ մարդ
Նստեց աթոռին,
Վեր թռավ, գնաց
Սրանց գլխարկ էր

* * *

Հոկտեմբերն էր
Ես ծննդատան
Խոնավ ու երկար
Խուլ միջանցքներով
Ետ ու առաջ էի քայլում

Փակեցի աչքերս
Եվ սկսեցի
Ես մեղմ, մեղմ սուլել
Գլուխս հեռելով բաց պատուհանին
Անքուն գիշեր էր

Պուրակի ծառերի միջև
Խենթություններ են
Անում ծտերը
Նայելով նրանց
Հանգստանում եմ

Հանկարծ ցնցվեցի
Դա այն, այն անմոռաց
Համբույրն էր
Չբնարու տերևն էր
Թռչում

Բավական է ես թույլ հոգոց հաճեմ,
Եվ կրծքիս խորքից աղմուկ է ելնում,
Որը տխուր է անգամ
Աշնանային
Հողմի ձայներից

* * *

Փակում եմ աչքերս,
Սակայն նրանց դեմ
Ոչինչ չի կանգնում
Ես շատ տխուր եմ
Աչքերս ստիպված բացում եմ նորրոց

* * *

Դուրս ելա տնից
Ու կես ժամ հետո
Քայլում եմ արդեն և իվ գործարար
Մի մարդու տեսքով,
Ասես թե ինչ որ տեղ եմ շտապում

* * *

Լուսավոր
Զմեռվա առավոտ
Տաք ջուր խմեցի,
Փափուկ գոլորշին
Դեմքս շոշափեց

* * *

«Թող լինի
Ինչ լինելու է»—
Այդպիսին եմ
Դարձել հիմա,
Էվ սարսափում եմ ահա դրանից

* * *

Ինչպես գնացքն է գնում
Ամայի դաշտով,
Այդպես էլ վիշտը
Իմ սրտի միջով
Ծամփա է գտնում

* * *

Կեղտոտ ձեռքերս
Հանդարտ լվացի
Ինչպիսի փոքր մի ուրախություն
Օրվա ընթացքում
Միակ հրճվանքը

* * *

Այս ամանորին
Միրտս մի տեսակ
Թեթև, հանգիստ է
Կարծես ամեն ինչ, ինչ որ եղել է,
Մոռացել եմ ես

* * *

Չուն պատահաբար
Քավաթ ջարդեցի
«Այդ ինչ լավ բան է
Կոտրել ասվածը» —
Ես մտածեցի այսօր առավոտ

Մի գիլ թրխկոց
Երեխաների ծիծաղ Ջգեստի շրջուն
Մի՞թե դարձել է
Ետ Ամանորը
Նախորդ այն տարվա

Երեկ
Նոր տարուն
Ինչ-որ մի լավ բան կկատարվի
Երկինքը ջիճջ է
Լռել է քամին՝

Ննջելով
Իմ սրտին էի ես նախատում
Նա միշտ սպասում է
«Ինչ որ մի լավ բան վաղը կլինի,
վաղը կլինի»

Ես տարօրինակ մի գլուխ ունեմ
Միշտ մտածում է
Անհասի մասին
Մի՞թե այս տարի
Նույնն է լինելու

* * *

Եվ բոլոր մարդիկ
Նույն կողմն են գնում,
Իսկ ես կանգնել եմ և լուռ նայում եմ
Ճամփեզրին
Նրանցից հեռու

* * *

Որպեսզի մի գիշերում
Ամբողջովին ծաղկի,
Տաքացրի ես թասն այն,
Ուր սալոր եմ տնկել
Բայց, ավաղ, ոչ մի ծաղիկ չբացվեց՝

* * *

Նոր տարին անցավ
Կյանքս գնում է
Իր սովորական
Թախծոտ
Ճամփեքով

* * *

Գուցե հեռանում է ինձնից
Տարվա ընթացքում եղած
Հոգնությունը
Այնպես խոնջած եմ
Ես ամանորի առաջին օրը

* * *

Մեղրամոմի պես
Խող ճրթճրթոցով սկսեց այրվել
Գիշերն
Ամանորի
Նախօրյակին

* * *

Սպասեցի նրան,
Ըստ սպասեցի
Սակայն նա չեկավ
Սեղանը տեղափոխեցի
Ես ահա այստեղ

* * *

Հին թերթի համար.
Տես, տես, այ, այստեղ,
Բանաստեղծություններս են
Գովում
Թող որ ընդամենը մեկ երկու տողով

* * *

Ես չեի նկատում
Այն ժամանակ,
Թե որքան մանկական
Միալներ կան այդտեղ,
Հին նամակների կապոցում

Անցումի խառնաշփոթում
Հին մի լուսանկար
Ոտքիս տակ ընկավ
Գունաթափ նկար
Դա նրա դեմքն էր

Դուռը հրեցի
Պալատի շեմից
Ես քայլ արեցի
Ինձ մի պահ թվաց
Թե միջանցքը այս էլ սահման չունի

«Մենք երեխա ունենք» —
Գրված էր քաղցիկին
Եվ վայրկենապես
Դեմքս
Լուսավորվեց

Սրդեն երևի հինգ տարի կլինի,
Ինչ ես չեմ տեսել
Երկինքն լայնահուն
Մի՞թե կարելի է
Այս կերպով ապրել

* * *

Կինս ու դուստրս
Ինձ այցի եկան
Ի նշ ուրախություն
Ես կրկին գտա
Սիրտս իսկական

* * *

Սնապատելի
Մոտենում են ինձ,
Չեոքս են սեղմում
Եվ անսպասելի
Հեռանում մարդիկ

* * *

Մի անանվիր հորդ
Եվ ոչ էլ պապիդ
Լսո՞ւմ ես, ինչ եմ
Խնդրում քեզանից,
Աղջիկս միակ

* * *

«Սյապե ս ասում եք՝
Չե՞ք ուզում ապրել»,—
Խիստ հարցրեց բժիշկը
Սիրտս պատասխան
Չուվեց նրան

* * *

Ի՞նչ անցավ մտքով
Հանկարծ աղջիկս թողեց
Խաղալը
Եվ լուռ ու խոնարհ
Նստեց իմ կողքին

* * *

Օ , դժբախտ իմ հայր
Տեսնում եմ, թերթը նա մի կողմ դրաց
Լկրդեն ուժ չունի նա էլ կարդալու
Եվ բակի խորքում
Հիմա խաղում է մի մրջյունի հետ

* * *

Ծերմակ մի շուն
Վազեց մեր բակի մոտով
Հարցրի կնոջս
«Գուցե
Ծո՞ւն գնենք»

* * *

Աղջկաս նախատեցի
Եվ նա քուն մտավ
Արցունքն՝ աչքերին
Բերանը՝ կիսաբաց
Քնած ժամանակ այտը շոյեցի

Մանկութե օրերին մորս հարցրի,
«Երբ քեզ կթաղեն,
Կարո՞ղ եմ գոնե ես մեն մի անգամ
Մի լավ շոր հագնել»
Իմ հարազատս, կներե ս դու ինձ

Արևը մայր մտավ
Ամպերը բզկտված ծվեններ են դարձել
Լուսին էլ չկա
Օ գիշերվա երկինք,
Որքան նման ես այս պահին դու ինձ

Յոթ անգամ
Կտան ես անունը քո,
Եվ մեր ողջ երկրի
Բոլոր զանգերը
Մի ակնթարթում կոչնակ կխփեն

Մի հարյուր անգամ
Առափնյա ավազին
«Մեծության» նշան ես նկարեցի:
Եվ մահվան մասին խոհերը թողած,
Ետ տուն գնացի

* * *

Կատակով
Մորս ուսերիս դրի՝
Սակայն նա, ավաղ, թեթև էր այնքան,
Որ երեք քայլ էլ չկարողացա
Անարցունք անցնել

* * *

Ասակոսայի այգում
Խրախճանք է
Ես էլ խառնվեցի ամբոխին
Բայց լքեցի այն
Ես տրտում սրտով

* * *

Ահա ինչ որ տեղ վիճում են մարդիկ,
Թե ով կքաշի
Վիճակն բախտավոր
Օ երանի թե
Ես էլ նրանց հետ մրցման մտնեի

* * *

Անձրև է գալիս
Եվ իմ հարկի տակ
Բոլորի դեմքերը
Մռայլ մռայլ են
Ախ, երանի շուտ անձրևն դադարեր



7 Ծառը նսկած պեղիս

**ԴԱՍԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՃԱՊՈՆԱԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՍԱՌԿԱ ՍԻԿԻ

Որքան թախիժ կա
Քարե ձևերի գեղեցկության մեջ
Այգու լապտերիկ

Ծղոտյա մի դուռ
Որ հրաժեշտ տանք անցնող գարնանը
Հյուրեր են գալիս

Հայրենի եզերք
Որ էլ նայում եմ,
Սարերն են ժպտում

Ծաղկող շագանակի
Բույրով է արբած
Լեռներին թիկնած իմ կացարանը

* * *

Ու ես ճամփորդ եմ
Վաղ, վաղ աշնանը
Մագամի գետով ես նավարկում եմ

* * *

Եվ այս դաշտերի անեզրությունը
Ասես ցողված է հեռացող աշնան
Հավերժ թախիժով

* * *

Վաղ արշալույսին
Երկնքից անբառ, լուռ հեռանում եմ
Աստղերն սիրահար:

* * *

Ավաղ, շատ վաղուց
Իմ կյանքում ոչինչ էլ չի կատարվում
Մռայլ երեկո, թախճալի աշուն

* * *

Ցանկապատի մոտ
Ծաղիկ է թոռնում:
Օ՛, մի՞թե վարդ է

* * *

Ձմռան թխպոտ օր—
Մարգերի վրա լուռ թեւածում է
Հսկա մի թռչուն

* * *

Բրնձի արտը արդեն հնձել են
Վշտից խելագար ալիքների մեջ
Նետվեց ծղրիդը

* * *

Արդեն չեմ հիշում
Հին տաճարների անունները ես
Գարնան մեղմ հովիկ

* * *

Ցուրտ, սառն աշուն է
Ելել անկողնուց՝
Ետ ու առաջ եմ քայլում միջանցքով

* * *

Հրա շք գիշեր է
Եվ ծովում ոչ մի առագաստ չկա
Աշնան վերջերն են

Դարպասներից լուռ ես դուրս եմ գալիս,
Տասը քայլ այն կողմ
Աշնան ցուրտ ծովի անեզրությունն է

Լամպը կախեցի
Ես ծառի վրա, հենց իմ տան կողքին
Գիշերային ծղրիդներ

Կրակ եմ վառում—
Գիտեմ, միայնակ ես պիտի կարճեմ
Գիշերն այս թախճոտ ու աշնանային

Որքան շատ տուն կա,
Որոնց դռները փակ են կողպեքով
Գլուղում ձմեռ է

Որերորդ անգամ
Ես դուրս եմ ելնում,
Որպեսզի չափեմ ձյան խորությունը

Խիտ վարագորված իմ լուսամուտից
Ես չտեսա էլ, թե ինչպես թռչնեց
Վարդը իմ այգում

Գիշերվա կեսին այգուս մի ծայրում
Տնկում եմ այսօր շուկայից գնած
Նուրբ ծաղիկները

Իմ դեղձանիկը
Լքեց ինձ գարնան շունչը զգալով
Գիշեր է իջնում

Անձրևից հետո
Ճնճողուկն ուտաստեց իմ պատշգամբում
Հետքերը թաց են

Ծաղիկներն են բացվել
Ախ, բոլոր նրանք, ում որ հիշում եմ,
Հեռո՛ւ են այնքան

Թիափարների երգը մի պահ լռեց
Սառնաշունչ քամին
Արդեն գրուցի խոսքերն է բերում

Ձեռքիս սալորի մի ճյուղ եմ բռնել
Հին ծանոթներիս
Ամանորը պիտի շնորհավորեմ

Օ, Մեծն Բուդդա—
Նրա մի ուսի ձյունը հալվել էր
Այսօր առավոտ

Կամորջը փլվեց
Ոռենին հիմա մեռակ կանգնած է
Ջրերի ասիին

ԹԱԶԱՀԱՄԱ ԿՅՈՍԻ

ԳԱՐՈՒՆ

* * *

Վաղ գարնանը ես
Այգում մեջ հանդարտ գրոսնում էի,
Ձեի էլ ուզում դոնակը քացել

* * *

Օ, որքան լավ էր
Լեռնային գյուղում
Վերածնվել է գարնանն այս ուրիշ

* * *

Ջրուցում ես ինձ հետ,
Բայց դանդաղորեն
Դու դեպի ծաղկած սալորն ես գնում

* * *

Խոր լուրջում է
Որքան ուժգին է հնչում
Սոխակի դալալը այստեղ

* * *

Տխուր նայում եմ
Խուճապահար եւ ծիծեռնակները
Անձրեկից առաջ .

* * *

Գարնանային քամի
Ես ընկերոջս ուները գրկած
Կանգնած եմ բլրին

* * *

Գարնան ամպերը՝
Թանկարժեք քարի
Կայծեր եւ ասես

ԱՄԱՌ

* * *

Երկար նայեցի ես արեգակին,
Հետո համրորեն իմ այգին դարձա—
Ծաղկում, փթթում եւ իմ պիտունները

* * *

Այնտեղ, շատ հեռվում,
Տնկիների նորը տերևիկները
Խշշում եւ քամուց

* * *

Խրճիթն այս,
Որը կանգնած է մարգերի ճամփին,
Անշուշտ «Վարդաստան» ես կկոչեի

* * *

Լուսատուիկ անցավ—
Երևի շատ մոտ
Առվակ կա այստեղ

* * *

Լուսատուիկի փայլփլող լույսը
Տեղատարափի խոլ շափշափյունից
Անէանում է աղջամուղջի մեջ

* * *

Իսկ գիշերային սև ստվերները
Հորդահոս գետի խոտերի մեջ են
Նշմարվում անգամ

* * *

ո այստում եմ՝
ուն ուր որ է այս լուսնի ճերքո կսկսի երգել
յրենի եզերք

ԱՇՈՒՆ

Փոքրիկ տերևը,
Աշնան արևի շոյանքով արթաձ,
Պոկվում է ճյուղից

Լուսնյակ գիշերին
Երկնակամարում, այլ աստղերի հետ,
Վառվեց և իմը

Գերեզմանատուն
Օ, որքան փոքր եմ ու որքան անշուք
Շիրիմներն նախնյաց

Օ, վառ ծաղիկներ,
Նրան, ով իրոք գմայլվում է ձեզնով,
Գոնե ինչ որ բան տաք շշնջացեք

Միայնակ ամպը երկնակամարում
Երկար կառչել է լուսնի կեռ ու սուր,
Պաւծառ եղջյուրից



Օ, որքան թանկ է
Տողոտ այս խոտը
Անցյալն եմ հիշում



Ամպերի հետքով,
Որոնք սահում են երկնակամարով—
Գնում եմ և ես

ԶՄԵՌ



Օ, ձմեռային առաջին անձրև—
Իմ սրտում երկար, երկար կմնա
Հուշը քո մասին



Ծուխ չի երևում
Ոչ մեկն ուրեմն չի այրում թոշնած
Այս տերևները

* * *

Անդորր քու՛մ մտե՛ք
Չմեռային այս անձրևների մեջ առաջին անգամ
Այնպես խաղաղ է

* * *

Շուտով կլո՛ի
Անտառահատի կացնի ձայնն ևս—
Ու ձմեռային անձրևն կսկսվի

* * *

Ես դուրս եմ գալիս,
Սակայն ինձ կարծես հետապնդում է
Մեղմ մի մեղեդի

* * *

Չմոռան արևը
Լուսավորում է հեռու լեռները
Մարգերը թռչնում են

* * *

Տոկիոյից հարավ,
Ասես գլխահակ, գետնին է հակվել,
Չմոռան արևը

ԻԻԴԱ ԴԱԿՈՑԱԻ

Գարունը ցուրտ է
Նախալեռները արթած են լուսնի պայծառ
շողերով
Պատահական է իմ կացարանը

Լուսինը նորել է,
Եվ նրա համար փոքրիկ մի տղա
Սրինգ է փչում

Սշուն էր, անձրև,
Իսկ նա համրաքալ լեռներն էր գնում
ծաղիկ փնջելու
Որքան պայծառ էր այդ կույսի դեմքը

Չյուներում կորան
Վաղուց հարազատ դարձած ճամփեքը
Լուռ տաքանում են ես օջախի մոտ

Երկինքը դատարկ է
Արփին իր սովոր ուղին է անցնում
Այս լեռնաստանում արդեն ձմեռ է

Վարդը լքելով,
Հանդարտ բզզոցով դեպի արևն է
Թռչում բզեզը

Ողջ գիշերն անքուն
Ես սպասում եմ կկուի երգին—
Այգու լապտերը չեմ ուզում մարել

Ցրված հայացքով
Օջախում այրվող փայտին եմ նայում
Նոր տարվա գիշեր

Երկնակամարում արևի գունդն է—
Աշնան խենթ քամին
Դեպ արևմուտք է գլորում նրան

Ուշ, ուշ աշուն է
Խոհերով տարված, կեսօրը անա
դիմավորում եմ
Լամպի լույսի տակ

ՄԻՋՈՂԱՐԱ ՍՅՈՍԻ

* * *

Դեղձանիկի դալալ
Քամին շարժեց գեթ կաղնու ճյուղերը
Եվ կորավ հեռվում

* * *

Գորտը կոռում է
Ուր է, որտեղ է — Անհետ անցել է
Ծաղկունքը գարնան

* * *

Օ կյանք
Քրիզանթեմին ընկերակցած
Կհանգչեմ այսպես ես լուսության մեջ

* * *

Ջյունոտ հեռաստան սասողերի ներքո՝
Հրաշք չէ՞ միթե
Ինչ որ թախիժ կա իմ հոգում, սակայն

* * *

Արդ ուշ է մթնում
Իմ համր քաղերն
Անարձագանք են



Լճի ալս ափին լուսնով հիացող
Չկա այլևս—
Բոլորը հիմա բրինձ են ժողվում



Խոտերում իրեն օթևան գտավ
Փոքրիկ մի կկու
Երեկոն դեպի գիշեր է թեքվում



Գիշերվա ձյունը
Ծառերն ու թփերն առավ քողի տակ
Աննկատ եկավ այս լուսաբացը



Ծիծեռնակներն են իրար ձայն տալիս
Լեռների գրկում, իմ հյուղից վերև—
Ահա և գարնան իմ խրախճանքը



Դուռն է կիսաբաց—
Գարնան արևի առաջին շողը
Հանդարտ նստել է բակի քարերին

* * *

Թխպոտ օրվա մեջ
Հոսանքին տրված հանդարտ լողում են
քրիզանթեմները,
Ու նավակները չեն էլ երևում

* * *

Որքա ն պայծառ է շողում լուսինը,
Սակայն թխկենու ստվերներն անգամ չեն
էլ երևում—
Անտառում մեզ է

* * *

Փարոսի լույսը
Կենդանացնում է ասես, դեմքերը
Օ, գարնան լուսին

Ցորենի վրա առտվան շաղ է
Դեպ հրվանդանն են խելագար գետվում
Ալիքներն ծովի

ՄԱՅՈՒՄՈՏՈ ԿՅՈՍՈ

* * *

Աչքն իր անկեղան
Դեպ ինձ է հատել արագին ընկած
Սպանված ճաշը:

* * *

Հեծանվից իջած
Հանգստանում եմ
Ես հնձված արտում

* * *

Ավելն վերցրի՝
Ծաղկաթերթերը կրակների պես
Բոցավառվում են

* * *

Հեռվում տեսնում եմ
Ինչպես է զանգը
Ծոճվելով զնգում:

* * *

Մուտքի մոտ հանկարծ ձեռնափայտ տեսա
Հյո՞ւր է,
Եկել է շնորհավորի՞

* * *

Կրպակի մոտ այն պահակն է կանգնած
Հաւացքով իրար լուռ ողջունեցինք
Պաղ, պաղ անձրև էր

* * *

Ծաղկամանի մեջ
Եղեգն դրեցի
Ինչ բարեհամբույր դարձավ սենյակը

* * *

Ես այգու դուռը բացեցի հանկարծ,
Թղթյա տիկնիկները
Ճամփան ցույց տվին

* * *

Վերջին քրիզանթեմն եմ կտրում ես ահա
Անձրևը
Որքան, որքան երկարեց

Անձրևոտ օր է
Իսկ դուրսը տոն է՝
Աքլորակոիվ

Խեղճ տիկնիկները
Տեղատարափին
Լրիվ թրջվել են

Ես անգամ սրանք
Ծաղիկ եմ կոչում
Եվ չեմ գետնում դուրս

Ասես, ինչ որ մեկն
Իմ լուսամուտից
Կախել է փոքրիկ երկնքի կտոր

Լուռ ունկնդրում եմ
Կկուի ձայնը Արևի շողերն
Գիշերն են քշում

ԱԶԻՄՈՏՈ ՖՈՒԳԻՈ

Որքան թախժոտ եմ իմ աչքերն հիմա,
Երբ որ տեսնում եմ
Գաշտի խոտերը այրող կրակը

Արևամուտին
Այս ակվարիումի ապակու ներսում
Բոցավառվել է նուրբ ծովախոտը

ԻԻԳԱ ՌՅՈՒՐԱ

Ամպերը ասես
Այս հնձվորումում
Թափանցիկ քողն եմ

Ամեն ինչ լուց
Բոլորն համրացան
Հեռացող աշուն

ԻՍԻԴԱ ՀԱԿՅՈ

* * *

Կյանքը պայքար է Եվ ճնճողուկները
Այս նիհար շանը խաբել են ահա՝
Կոցում են նրա խեղճ կերակուրը

* * *

Գարունը եկավ
Բնությունն ասես արբել է
Իրեն հրամցված մի կում սակեից

ԻՍԻՑՈԿԱ ՏՈՄՈԶԻ

* * *

Երբ որ սպիտակ նուրբ ծաղիկները
Գետինն են ծածկում,
Այդժամ հիշում են ես դահուկները

* * *

Գլխիս վերևում, ձուլվելով իրար,
Թիթեռնիկների
Զույգն է պտտվում

ԿԱԴՈԿԱՎԱ ՄԻՆԱՅՈՍԻ

Ծաղիկները վառ լուռ հիանում են
Ծովի ամպերի հրաշք նարինջով
Իսկ իրենք ասես արշալույս լինեն

Գարունը, անշուշտ, հրաշալի է,
Բայց իմ կնոջ մեջ գարնան գույների ողջ
տարերքը կա,
Դրան գումարած՝ ձյունի ներմակը

ԿԱՏՈ ԿԱԿԵՅ

Պայթող բողբոջների խուլ տնքոցները
Այս լուռության սեջ
Քարերը, ասես, ձայնագրում են

Մարմինը իմ խուլ, հոգնած, խոնջացած,
Պայծառանում է
Կնոջս բարի ու նուրբ շոյանքից

ԿՈՒՅԱՍԻ ՖՈՒՄԻՈ



Իր տերևների ափում ամփոփված,
Այս սուվերախիտ ու բարձր ծառը
Մեզ է մատուցում զովը գիշերվա



Շագանակ ընկալ
Փոստատարը այն վերցրեց փութով
Եվ պահեց իր մեծ պայուսակի մեջ

ՍԻՔԱՍԻ ՏԱԿԱԶՅՈ



Առափնյա խոտեր
Օ, ձկան համար դուք երբեք, երբեք
Լավը չեք դառնա



Նայիր փայտի անցքից
Լուսինը ասես նրա ձևն ունի
Որքան խղճուկ է, մա՛րդ, տեսադաշտդ

ՄԻՆԱՅՈՍԻ ՍՈՌԻ

* * *

Ողջ օրը բանում եմ
Դադարի պահին հեռուն եմ նայում
Որքան պայծառ է իմ հայրենիքը

* * *

Իմ երազներն էլ ինչ որ ժամանակ
Նման են եղել
Գարնանային խեղճ այս անուրջներին

ՆԱՅՏՈ ԴՈՐԷՆ

* * *

Ալիքի նման
Մեկ մեծանում է ձկնորսի բախտը,
Մեկ անհետանում

* * *

Թիթեռնիկն, ինչպես սուրսաչր դանակը,
Մեջտեղից կիսեց
Պաղ ու թափանցիկ ջուրն շատրվանի

ՆԱԿԱԶԻՍԱ ՏԱԿԷՌ

Զահել նժույգը մեզ հիշեցնում է
Մեր պատանուության օրերը ոսկե
Եվ տախաստանը լուսավորում է

Խոհա թեթև է,
Ինչպես որ քայլքը անհատակ գետի
Այնքան թափանցիկ սառույցի վրա

ՆԱԿՈՄՈՒՐԱ ԿՈՒՍԱՏԱՌ

Վարդագույն մուժում
Լուռ, լուռ խոնարհվել արև շիրիմներից
Ահա թե ես ինչ կարող եմ անել

Երբ մթնշաղն է իջնում լռելյայն,
Եվ լուռ խամբում են թռչնի աչքերը,
Խավար անտառում պարն է սկսվում

ՆԱԿԱՄՈՒՐԱ ԹԻՅՈՉՅՈՒ

* * *

Հոգնած դուրս եկավ նավակի միջից
Արևամուտ էր Կնոջ ոտքերը թվաց ինձ
մի պահ,
Արևածագը կրկին ետ բերին

* * *

Մարդիկ,
Ծնշվելով ջրվեժի ձայնից,
Հանդարտ լուռ եմ

ՆՈՉԱՎԱ ՍԼՏՈՒԿՈ

* * *

Լեռան լանջերին
Լուռ խափարում է մամուսպատ կոճղը՝
Գարնան գահաթոռն

* * *

Լեռներում մութ է
Մորից անջատված հորթուկը այսօր
Նոր կյանք է մտնում

ՕՆՈ ՌԻՆԿԱ

Ծաղկած խնձորի գույնզգույն ցուքը
Վառ արեգակից
Վերև է թևում

Ամենացածր
Խոտերը անգամ
Միշտ երևում են լեռնագագաթին

ՍԱՎԱԿԻ ԿԻՆՅԻՏԻ

Անգամ անասող գիշերներին էլ
Ես շոշափելով ճշտիվ գտնում եմ
Կյանքով ծանրացող բողբոջները այս

Կյանք
Երկաթգծերի արանքում անգամ
Խոտեր են աճում

ՍԱՅՏՈ ՍԱՆԿԻ

Առուն անտառի
Սոխակի երգից բարձր է գնգում
Խավար գիշերով

Օ, ինչպես հանկարծ ես անտեցի
սառցաբեկորն այդ
Նրան լուսինը իր ճանանչներն էր
պարզել շոսյլ
Ինքնասպանության միտքն անէացավ

ԹԱՔԻ ՀԱՐՈՒԻԹԻ

Բողոքայի դեմքը սիրում եմ միայն
Նրա կիսաբաց աչքերից ցայտող
Այնքան կանացի անուրջի համար

Արևը ելավ.
Ասես թե հողմը անթափանց մուժից
Մսի մի կտոր անտեց դեպ երկինք

ՀԱՍԻՄՈՏՈ ԹԱԿԱԿՈ

* * *

Հովիվը տխուր է
Իսկ, այ, գառները՝ անգամ պաղ քամուն,
Ուրախ են, զվարթ

* * *

Գարունն էմ տեսնում
Նախապաշարմունքների մութ քողի միջով
Մարմին իմ, տոկա

ՀՈՍԻՆՈ ՏԱՑՈՒԿՈ

* * *

Սիրում էմ ես միշտ
Անձրևից հետո
Հանդարտ ու զուլալ հովն գարնանային

* * *

Նոր օրվա հանդեպ
Միշտ նորովի էմ տրամադրվում
Ամեն օր ես նոր զգեստ էմ հագնում

ՀՈՍՈՄԻ ՍՅԱԿՈ

Ընթրիքս համեստ ես միշտ կիսում եմ
Իմ բուխարու հետ
Ասես թե նա է միակ հարազատն ու մտերիմս

Ծաղիկներն, ավաղ, էլի թռչնեցին:
Ինչպես ողջ մի կյանք՝ երկար, երկար է
աշնան գիշերը,
Երբ մեռակ եմ ես

ՀՈՍՈՅԱ ԳԼՆՁԻ

Լեռնային գետի
Զրերը երբեք, երբեք չեն սատչում
Նրանց փրկարարն ինքը արփին է

Կնոջս երբեք, երբեք չեմ լքի
Թեկուզ նա լապշան ուտում է անդուր մի
չփչփոցով
Մեկ է, չեմ լքի

ԷՆՈՄՈՏՈ ՖՈՅՈՒ

Կեսգիշերային անձուկ խավարում
Տքնում եմ, ջանում բազմաթիվ ձեռքեր,
Որպեսզի վառեն իմ, քո աստղերը

Դաշտի կրակները
Պահապաններ եմ կարգված արևին
Գարնան այս գիշեր

ՅԱՄԱԳՈՒՏԻ ՍԼՅՍԻ

Փափուկ, շատ փափուկ անկողիներ կան
Զյունոտ կատարին գտնվող տանը
Բայց լքված է այն

Գիտցիր
Թե բարձունքը իմ, թե իմ անդունդը
Դու ես, դու միայն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

VII—XVIII դարեր

Օտոմն Տաթևո	3
Օտոմն Յակամոտի	4
Կասա Կանամուրա	4
Միբու Տադամիճե	6
Սոճե Յոսիտադա	6
Սյոկու Սյոճիճ	7
Սագամի	7
Իձիմի Սիկիբու	7
Աճճայտ բանաստեղծներ	8
Սոսէ Հոսի	9
Քի-ճո Տիրայուկի	9
Օճիկուտի Միցուճե	11
Սայգյո	11
Փուձիվարա Սատաիե	14
Սիկիսի-Նայսիճճո	15
Ռյոբան	15
Օկուսա Կատոմիտի	15
Իսյո	16
Ռանսեգու	16
Թիյո	17
Կիգաբու	17
	131

Օնիցո րա	18
Չլոսո	18
Բոնսլո	18
Բուսոն	19
Իսսա	19
Բասլո	20
Իսիկալա Թարո քոքո	53

Դասական ժանրերի ճապոնական ժամանակակից քնարեր գուրջուն

Մասսուկա Սիկի	98
Թաքահամա Կլոսի	104
Իիդա Դակոգաի	110
Միձոհարա Սլոսի	113
Մացումոտո Կլոսո	116
Ազիմոտո Փուդիո	119
Իիդա Ռյուրա	119
Իսիդա Հակլո	120
Իսիցոկա Տոմոձի	120
Կարոկավա Մինայոսի	121
Կատո Կակեյ	121
Կորայասի Ֆումի	122
Սիբասի Տակաձյո	122
Մինայոսի Սոո	123
Նայտո Դորէն	123
Նակաձիսա Տակեո	124
Նակոմուրա Կուսատսո	124
Նակամուրա Թիյոձյո	125
Նոձավա Սետոկո	125
Օնո Ռիճկա	126
Սալակի Կիճիտի	126

Սալտո Սանկի	127
Թաքի Հարուիրի	127
Հասիմոտո Թակակո	128
Հոսինո Տացուկո	128
Հոսոմի Սյակո	129
Հոսոյա Գենձի	129
Ինոմոտո Ֆոյու	130
Յամագուտի Սեյսի	140

Գրական գեղարվեստական հրատարակություն

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ

(Հորուներ թանկաներ)

Литературно художественное издание

Японская поэзия

Ереван издательство «Наири»

На армянском языке

Իրագիր Ֆ Մ Պետրոսյան
արիչ՝ Գ Վ Բաղդասարյան
դ խմբագիր Գ Վ Մարիկյան
ի խմբագիր Վ. Գ. Ավագյան
րատուգող սրբագրիչ՝ Ս Մ Բուլարյան

ԽԵ № 6998

Հանձնված է շարվածքի 20 09 93: Ատորագրված է տպագրության 5 11 93 Խորմատ 70X90¹/₈₂: Տառատեսակ «Նորք»: Տպագրություն՝ բարձր: 4,97 պայմ. տպ մամ 8 2 հյատ մամ.: Տպարանակ՝ 2000 Պատվեր՝ 562 Գինը պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9 Տերյան 91
Издательство «Наири» Ереван-9 ул. Теряна 91

ՀՀ Հանրապետության Կառավարությանն առընթեր հրատարակչական գործերի վարչության № 1 տպարան Երևան—10, Հանրապետության 65:

Типография № 1 Управления по издательским делам при Правительстве Республики Армения Ереван 10 ул. Арапетутян 65

